ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1941 թվի ապրիլին Մայր Աթոռում գումարված Համազգային ժողովը իր ընդունած կարևոր որոշումների շարքում հանձնարարել է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին պարբերաբար իր ներկայացուցիչները ուղարկել Միութենական Հանրապետությունների եվ արտասահմանի թեմերը, ի մոտո ծանոթանալու նրանց հոգևոր-բարոյական վիճակի, տեղերի հոգևոր իշխանության գործունեության, նրանց կարիքների ու պահանջների հետ, որպեսզի ըստ հարկին ցուցումներ տրվեն թեմերում աշխատանքները բարձրացնելու և արդյունավետ դարձնելու նպատակով:

Բնական է, որ այդ աշխատանքները բացի այն, որ կբարեկարգեն թեմերը, առավել ևս սերտ հարաբերություն կստեղծեն աշխարհի զանազան կողմերում ցրված հայության և Մայր Աթոռի միջև:

Ելնելով Համազգային ժողովի այդ իսկ որոշումներից, այլ և Մայր Աթոռի և արտասահմանի թեմերի մեջ գոյություն ունեցող կապը ավելի ուժեղացնելու, ինչպես և այդ թեմերի վիճակի հետ ծանոթանալու նպատակով Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի տնօրինությամբ ս. թ. ապրիլին Մերձավոր Արևելք գործուղվեց Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի գիտական քարտուղար պրոֆեսոր-դոկտ. Ա. Աբրահամյանը, որպես լիազոր ներկայացուցիչ Ս. Էջմիածնի և Ամեն. Տ. Տեղակալի: Պրոֆեսոր Աբրահամյանի օգնական և անձնական քարտուղար է նշանակված պ. Անուշավան Տեր-Գրիգորյանը:

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալը հանձնարարել է իր պատվիրակությանը այցելելու նախ Մերձավոր Արևելք՝ Իրան-Հնդկաստանի, Ատրպատականի, Իրաքի ու Եգիպտոսի թեմերը, Երուսաղեմի վանքերն ու Կիլիկիայի Տան կաթողիկոսությունը, իր հայրական ողջույնն ու Մայր Աթոռի օրհնությունը տալու գաղութահայ իր հոտին, ապա պարտավորեցրել է ուսումնասիրել Իրան-Հնդկաստանի թեմական առաջնորդի ընտրության խնդիրը, Թեհրանի նոր թեմ կազմակերպելու հարցը, անջատելով Թեհրանը շրջակայքով Իրան-Հնդկաստանի թեմից, այս հարցում նախապես առնելով Իրանի դահակալի թույլտվությունը և նկատի առնելով Թեհրանի ու Սպահանի համայնական վարչությունների տեսակետները:

Հայրապետական պատվիրակությունը ս. թ. ապրիլին արդեն ժամանել է Ատրպատականի թեմի կենտրոնը՝ Թավրիզ:

Այն խանդավառ ընդունելությունը, որ Թավրիզի հայությունը ցույց է տվել Հայրապետական պատվիրակությանը, վկայում է Թավրիզի հայության անսահման նվիրվածությունը Հայրապետական Աթոռին և Մայր Հայաստանին:

Բազմամարդ ժողովում պատվիրակությունը տեղեկացրել է Թավրիզի հայ հասարակությանը Մայր Աթոռում կատարվող բարենորոգումների, հրատարակվող Հայրապետական ամսագրի, ինչպես և այն մասին, որ Մայր Հայրենիքում Հայրապետական Աթոռը միանգամայն անկաշկանդ տնօրինում է իր կրոնական ներքին գործերը և վայելում Հայաստանի կառավարության բարյացակամ վերաբերմունքը:

Նույն այդ բազմամարդ հավաքույթում պատվիրակությունը միաժամանակ տեղե-

կացրել է այն խոշոր նվաճումների մասին, որ Սովետական Հայաստանը ձեռք է բերել գիտության, գրականության, արվեստի, շինարարության, տնտեսության և այլ ասպարեզներում։

Պատվիրակության հաղորդումը առաջ է բերել խորը հետաքրքրություն և վառ հայրենասիրություն ունկնդիրների մեջ։

Այդ է ասում Թավրիզում հրատարակվող «Վերածնունդ»-ը իր ապրիլի 24-ի խմբագրականում։

«Մենք սրտագին ողջունելով Մայր Հայրենիքից եկած Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալի պատվարժան պատվիրակ պրոֆ. Ա. Աբրահամյանի ժամանումը, բարի գալուստ ենք մաղթում նրան և իր քարտուղարին։

«Ուրախ ենք, որ երկար տարիներից հետո, այսօր Մայր Աթոռը լրջորեն զբաղվում է մեր թեմերի բարեկարգման խնդրով։ Ցանկանում ենք կատարյալ հաջողություն մեր դիմանական պ. պրոֆ. Աբրահամյանին։ Վստահ ենք, որ նրա աշխատանքը շատ շուտով առողջ ու կենսունակ ոգի ու կյանք պիտի ստեղծե մեր թեմում»։

Հայրապետական պատվիրակությունը իրազեկ դառնալով Սփյուռքի հայության եկեղեցական, կրթական, դպրոցական թեմերի հասույթների և այլ խնդիրների դրությանը ու պայմաններին, հնարավորություն կրնձեռի Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տ. Տեղակալին և ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին ընդհանուր ծանոթանալու և անմիջապես անցնելու թեմերի բարեկարգման և դրա հետ կապակցված բազմաթիվ հարցերի արագ լուծման, թեմերի ղեկավարության գործի մեջ աշխուժություն մտցնելու հրատապ աշխատանքներին։

Սփյուռքի հայությունը վաղուց ակնկալում էր Հայրապետական Աթոռի պատվիրակության այցելության։ Նրա իղձն արդեն կատարված է։

Հայրապետական պատվիրակությունը կվերադառնա, անշուշտ, իր հետ բերելով Սփյուռքի մի խոշոր հատվածի՝ Իրանի, Իրաքի, Սիրիայի, Երուսաղեմի, Եգիպտոսի հայության իղձերը, նրա ցանկությունները։

Հայության այդ հատվածի իղձերն ու ցանկությունները հիմք կհանդիսանան հետագա այն ծավալուն աշխատանքների համար, որ կկատարվեն թեմերի հոգևոր, կրթական, դպրոցական և նրանց բարեկարգման այլ խնդիրների գծով։

Այս աշխատանքները ավելի ևս կամրապնդեն ու անխզելի կդարձնեն Սփյուռքի հայության կապը Մայր Աթոռի և իրենց Մայր Հայրենիքի՝ Հայաստանի հետ։

Ցանկանում ենք ուժ և կարողություն Հայրապետական պատվիրակությանը հաջողությամբ կատարելու իր պատասխանատու առաքելությունը և արդարացնելու Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տ. Տեղակալի հույսերը։